

---

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

### ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ֆրանսիայի հետ հարաբերությունները Հայաստանի համար առաջնային նշանակություն ունեն ման ԼՂ հարցի կարգավորման գործում: Ֆրանսիան, ձգտելով ներկայություն ապահովել Հարավային Կովկասի տարածաշրջանում, հատուկ ուշադրություն է դարձնում Հայաստանի հետ հարաբերություններին: Ֆրանսիան աշխարհի այն երկրներից է, որի հետ Հայաստանն ունի զարգացած և բազմաբնույթ հարաբերություններ:

Ֆրանսիան աշխարհում տեղի ունեցող գործընթացներում կարևոր դիրք է զբաղեցնում: ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամ է, Գերմանիայի հետ շարժիչի դեր է խաղում եվրաշինարարության գործում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր է: Այս գործոնները օգնում են Ֆրանսիային ամրապնդելու իր ներկայությունը տարածաշրջանում՝ հիմնվելով Հայաստանի հետ գործընկերային հարաբերությունների վրա:

Անկախ Հայաստանի առջև ծառայած հիմնական խնդիրներից է ԼՂ հարցի արդարացի լուծումը: Միջազգային հանրության ներգրավվածությունը հրատապ է դարձնում ԼՂ խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ հիմնական ուժերի դիրքորոշումների պարզաբանումը և լուսաբանումը:

ԼՂ հարցում Ֆրանսիայի քաղաքականության ուսումնասիրությունը կարևորություն է ներկայացնում մի շարք առումներով: Նախ՝ Ֆրանսիան ԵՄ առաջատար երկրներից է մյուս համանախագահ երկրների՝ ՌԴ-ի ու ԱՄՆ-ի հետ մեկտեղ և ներկայացված է ԵԱՀԿ եռանախագահությունում որպես Եվրոպայի ծայն, ինչը վկայում է Եվրոպայում և աշխարհում նրա ունեցած կշռի մասին: Ֆրանսիայի հետ Հայաստանի ավանդական բարեկամական հարաբերությունները դարերից եկող հարուստ պատմություն ունեն:

ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը միջազգայնացվեց 1992 թ. մարտի 24-ին, երբ Հայաստանի ու Ադրբեջանի ԵԱՀԿ-ին անդամակցելուց հետո Մինսկում գումարված կոնֆերանսի ժամանակ որոշում ընդունվեց ԼՂ խնդրով զբաղվող հատուկ խումբ ստեղծել, որով և սկզբնավորվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացը<sup>1</sup>:

Սկզբում այդ խմբում ընդգրկված էին 9 պետություններ՝ Բուլղարիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ֆրանսիա, Չեխոսլովակիա, Շվեդիա, ինչպես նաև՝ ուղղակի կամ անուղղակի ներգրավված երեք կողմեր՝ Հայաստանը, Ադրբեջանը և ԼՂՀ ներկայացուցչությունը: Հե-

---

<sup>1</sup> Տե՛ս **Манасян А. С.** Карабахский конфликт. Ракурсы правового подхода. Ер., 1998, էջ 35-36:

տագայուն Մինսկի խումբը որոշ փոփոխություններ կրեց. Չեխոսլովակիային փոխարինեց Յունգարիան, ավելացան Ֆինլանդիան և Շվեյցարիան<sup>2</sup>:

Միջազգային հանրության շրջանում որոշվեց ԼՂ հարցով զբաղվող միջնորդական կառույցը կոնֆերանսի վայրի անունով կոչել Մինսկի խումբ: ԵԱՀԽ միջնորդական առաքելության Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունները անարդյունավետության պատճառով ժամանակավորապես կասեցվեցին 1993 թ. հոկտեմբերին: Եվ միայն ԵԱՀԽ Բուդապեշտի գազաթնաժողովում (1994 թ. դեկտեմբերի 5-6-ը) որոշում ընդունվեց ԵԱՀԽ ջանքերի համախմբման նպատակով ձևավորել համաախազահների ինստիտուտ:

Այսպիսով, ռազմական փուլի ավարտը (1994 թ. Բիշքեկի զինադադարը) հանընկավ նոր շրջանակով բանակցային գործընթացի ձևավորման հետ: ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը, ընդգծելով այդ կառույցի կարևորությունը, նշում է. «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը ԼՂ հակամարտության կարգավորման բանակցությունների հիմնական հարթակն է»<sup>3</sup>:

Լիսաբոնի գազաթնաժողովում (1996 թ. դեկտեմբեր) որպես հիմք ընդունվեց պետության տարածքային ամբողջականության սկզբունքը, և անտեսվեց ազգերի ինքնորոշվելու իրավունքը, որը կողմնապահ մոտեցում էր և չէր կարող դրական ազդել բանակցային գործընթացի վրա: 1997 թ. մարտին Մոսկվայում Մինսկի խմբի հետ կայացած առաջին հանդիպման ժամանակ Ադրբեյջանը պնդեց, որ հետագա բոլոր բանակցություններն ընթանան «Լիսաբոնի սկզբունքների» հիման վրա, ինչը բանակցային գործընթացը ժամանակավորապես փակուղի մտցրեց: Իսկ Լեռնային Ղարաբաղի պաշտոնական մասնակցությունը Մինսկի խմբին դադարեցվեց, թե ԼՂ-ն շարունակում է մնալ բանակցային գործընթացի մասնակից:

Մինսկի խմբի գործընթացի ընդհատումից հետո կողմերին ներկայացվեց 2 առաջարկ: 1997 թ. մայիսին ներկայացվեց փաթեթային առաջարկը<sup>4</sup>, որն ընդգրկում էր բոլոր հարցերը՝ ներառյալ կարգավիճակը, սակայն այն հիմնված էր «Լիսաբոնի սկզբունքների» վրա: Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը բնականաբար մերժեցին այն: 1997 թ. սեպտեմբերին համաախազահները, մտածելով, որ անհնար է կարգավիճակի շուրջ համաձայնության հասնել «Լիսաբոնի սկզբունքների» հիման վրա, ներկայացրին փուլային կարգավորման առաջարկը<sup>5</sup>, որը ենթադրում էր տարածքների վերադարձ՝ առանց կարգավիճակի հարցը քննարկելու:

Այս առաջարկի քննարկումը ՀՀ վարչակազմի ներսում լուրջ տարակարծությունների տեղիք տվեց և ի վերջո հանգեցրեց ՀՀ նախագահի հրաժարականին:

Մինչև 1997 թ. Ֆրանսիան փորձում էր հավասարակշիռ քաղաքական

<sup>2</sup> Տե՛ս **Казимиров В.** Гуманитарная катастрофа в зоне Карабаха была, может быть, больше, чем ныне вокруг Косово // "Международная жизнь", 1999, № 5, էջ 13:

<sup>3</sup> **Վ. Օսկանյան**, Անավարտ տասնամյակ: Ելույթների ընտրանի, Եր., 2007, էջ 319:

<sup>4</sup> Տե՛ս «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ» (խորհրդարանական լսումներ 2005 թ. մարտի 29-30), Եր., 2006, էջ 456:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 470:

նություն վարել Հարավային Կովկասի երեք հանրապետությունների շրջանում՝ նույնիսկ սիրաշահելով Ադրբեջանին: Ֆրանսիայի շահերը պահանջում էին ներթափանցել տարածաշրջան և ձեռք բերել ազդեցություն: Ադրբեջանի հետ հնարավոր նավթային պայմանագրեր ստորագրելու գրավչությունը որոշ շրջադարձ ապահովեց հոգուտ Ադրբեջանի, սակայն Ֆրանսիան և ֆրանսիական ձեռնարկությունները մասնակցություն չունեցան նավթահանքերի շահագործման վերաբերյալ կնքված առաջին պայմանագրերին (կնքվեցին 1994 թ. հոգուտ անգլո-ամերիկյան ընկերությունների), որոնցից ամենակարևորները վերաբերում էին «Շիրագ», «Ազերի», «Գյունեշլի օֆշոր» նավթահորերի շահագործմանը: Ֆրանսիայի արտգործնախարարի տարածաշրջան և մասնավորապես Բաքու (1996 թ.) կատարած այցը ֆրանս-ադրբեջանական տնտեսական հարաբերությունների սերտացման հարցում որևէ նշանակալի արդյուն չունեցավ:

ՀՀ նախագահի՝ Ֆրանսիա կատարած այցի ընթացքում (1997 թ. աշնանը) Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակը, կարևորելով Ֆրանսիայի մասնակցության հնարավորությունը հակամարտության խաղաղ կարգավորման հարցում, ընդգծեց բանակցային գործընթացում ԼՂ-ի՝ որպես կարևոր կողմի ներգրավումը:

Ֆրանսիան հավաստեց ԵԱՀԿ Մինսկի խորհրդատուների համանախագահությունը ստանձնելու իր մտադրությունը, որը ԵԱՀԿ խաղաղության գործընթացում ավելի ակտիվորեն ներգրավվելու նրա կամքի արտահայտությունն էր: Ղա նաև Հարավային Կովկասում տնտեսական և ռազմավարական ներկայություն ապահովելու գրավական էր: Ադրբեջանի կողմից Ֆրանսիայի համանախագահության թեկնածության մերժումը, ըստ ֆրանսիացի պաշտոնյաների, բացասական նստվածք թողեց երկկողմ հարաբերություններում, որն ակներև դարձավ նախագահ Հ. Ալիևի Ֆրանսիա կատարած այցի ժամանակ:

1998 թ. օգոստոսի 22-ին Իրան այցելեց Ֆրանսիայի արտգործնախարար Հ. Վեդրինը, որը պայմանավորված էր նախագահ Խաթամիի վարած քաղաքական բարեփոխումներով. Իրանն իր արտաքին քաղաքականության և տնտեսական հարաբերությունների «ծանրության կենտրոնը» տեղափոխում էր Եվրոպա: Ֆրանսիայի արտգործնախարարի Թեհրան կատարած այցի ընթացքում Իրանի արտգործնախարար Խարազիի հետ հանդիպման ժամանակ խոսվեց նաև Ղարաբաղյան հարցի մասին: Խարազին ցանկություն հայտնեց մասնակցելու Ղարաբաղյան հարցի կարգավորման գործընթացին, որին ի պատասխան Հ. Վեդրինը հայտնեց, որ այդ առաքելությունը վստահված է ԵԱՀԿ-ին, որին Իրանը չի անդամակցում, սակայն, այնուամենայնիվ, խոստացավ աջակցության մասին Իրանի կողմից պաշտոնական դիմում ներկայացվելու դեպքում այն քննարկել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ<sup>6</sup>:

1998 թ. Մոսկվա կատարած այցի ընթացքում Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժ. Շիրակը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ելցինը քննարկեցին ԼՂ հակամարտության հարցը և համաձայնության

<sup>6</sup> Տե՛ս ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 1, գործ 180, էջ 168:

եկան աջակցելու խաղաղության հաստատմանը<sup>7</sup>: Ակնկալվում էր, որ Ֆրանսիան և Ռուսաստանը հակակշիռ կկազմեն ԱՄՆ-ի ադրբեջանամետ դիրքորոշմանը:

1998 թ. Հայաստանում տեղի ունեցած ներքաղաքական փոփոխությունները հայ-ֆրանսիական գործընկերային հարաբերությունների վրա ըստ էության բացասական ազդեցություն չունեցան: Ընդհակառակը, Ֆրանսիայի ԱԳՆ որոշ պաշտոնյաների զարմացրել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացրած ԼՂ հիմնահարցի փուլ առ փուլ<sup>8</sup> կարգավորման տարբերակի ընդունումը Լ. Տեր-Պետրոսյանի կողմից, քանի որ գտնում էին, որ դրանով վերջինս ստանձնում է անձնական մեծ պատասխանատվություն: Նրա հրաժարականից հետո ՀՀ նախագահի պաշտոնում Ռ. Քոչարյանի ընտրությունը Ֆրանսիայում դիտվեց որպես Հայաստանը ստեղծված վիճակից դուրս բերելու հնարավորություն:

Հայաստանի նոր իշխանությունների որդեգրած արտաքին քաղաքականության որոշ մոտեցումներ տարբերվում էին ԼՂ հարցում նախկին իշխանությունների վարած քաղաքականությունից:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների Հայաստան այցի ընթացքում միանշանակորեն մերժվեց ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակը և առաջարկվեց վերսկսել բանակցությունները՝ ներառելով հետևյալ 3 հարցերը.

- *հակամարտության համակողմանի կարգավորման վերաբերյալ առանց նախապայմանների բանակցությունների սկսումը,*

- *ԼՂ ներկայացուցիչների ուղղակի մասնակցությունը բանակցություններին,*

- *«ոչ ինքնավարություն, ոչ անկախություն» տարբերակի առաջարկումը<sup>9</sup>:*

ՀՀ իշխանությունների հետևողական գործունեությունը ԼՂ շուրջ ընթացող բանակցային գործընթացը ձևափոխելու ուղղությամբ և առաջարկները հավանության արժանացան նաև Ֆրանսիայի կողմից:

2001 թ. մայիսին Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի կովկասյան տարածաշրջան այցելությունից և Ռ. Քոչարյանի հետ հանդիպումից հետո ԵԱՀԿ ֆրանսիական համանախագահությունը հաստատեց, որ փուլ առ փուլ կարգավորման տարբերակն իրեն սպառել է, և հարկ է ներկայացնել ԼՂ հակամարտության կարգավորման այնպիսի առաջարկներ, որոնք հաշվի կառնեն բոլոր կողմերի տեսանկյունները<sup>10</sup>: Այս օրինակը ապացուցում է, որ գործընթացը փակուղուց հանելու համար հարկավոր են վճռական ու համարձակ քայլեր, որոնք համահունչ են ձևավորված նոր իրողություններին և բխում են երկրի շահերից:

Ֆրանսիայի ԱԳՆ պետքարտուղար Ռընո Մյուզըլիեի գլխավորած

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>8</sup> Տե՛ս «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ» (խորհրդարանական լսումներ 2005 թ. մարտի 29-30), էջ 470:

<sup>9</sup> Տե՛ս **Հ. Աբրահամյան**, Հայ ժողովրդի պատմություն, Եր., 2004, էջ 195:

<sup>10</sup> Տե՛ս ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 5, գործ 22, էջ 143:

պատվիրակությունը 2002 թ. հոկտեմբերի 3-5-ը այցելեց Հայաստան<sup>11</sup> ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի հետ հանդիպման ժամանակ անդրադառնալով ԼՂ հակամարտության կարգավորման հարցին՝ Ֆրանսիացի պաշտոնյան ընդգծեց, որ Հ. Ալիևի դիրքորոշումը<sup>12</sup> չի համընկնում ադրբեջանցիների ճնշող մեծամասնության դիրքորոշմանը, քանզի նրանք կարծում են, որ Բաքու-Ջեյհան նավթամուղի գործարկումը կփոխի ուժային հարաբերակցությունը ի վնաս Հայաստանի:

ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Ֆրանսիական առաջարկների էությունը հանգում էր հետևյալին. քանի որ Հայաստանը արդեն հաղթել է ԼՂ-ի համար մղված պատերազմում, ուստի պիտի պատրաստ լինի ջանքեր գործադրելու խաղաղությունը նվաճելու համար<sup>13</sup>:

Կողմերը գրեթե միշտ համաձայն են եղել, որ հակամարտության կարգավորումը լինի փոխզիջումային: Չնայած Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության նախագահների հանդիպումներին՝ բանակցություններում լուրջ առաջխաղացում չի գրանցվել, սակայն հստակեցվել են դիրքորոշումները և փոխզիջումների հնարավոր սահմանները: Հայաստանը գտնում է, որ 1. Լեռնային Ղարաբաղը չի կարող լինել Ադրբեջանի ենթակայության տակ, 2. Լեռնային Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ, 3. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:

Խնդրի կարգավորման հիմքը ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրումն է, իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի դիրքորոշումները կարող են որոշակի դեր խաղալ խնդրի վերջնական կարգավորման գործում:

Ադրբեջանի նման ոչ ժողովրդավարական պետության ներսում, ուր անընդմեջ տեղի են ունենում բռնություններ և հերոսացվում են մարդասպանները (Ռամիլ Սաֆարովի օրինակը) տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառումը անհամատեղելի է ԼՂ հայ ազգաբնակչության անվտանգության ու ազգային ինքնության պահպանման հետ: Ավելին, միջազգային զարգացումները աստիճանաբար ինքնորոշման իրավունքի ամրապնդման օգտին են: Միջազգային փորձը վկայում է, որ ինչքան երկար պահպանվի դե ֆակտո անկախությունը, այնքան ավելի է ամրանում միջազգային հանրության և տեղի ժողովրդի կամքը՝ պահպանելու ձևավորված ստատուս քվոն:

Ադրբեջանը հանդես գալով տարածքային ամբողջականության օգտին, տարբեր քայլերի է դիմում բանակցությունները խափանելու կամ այլ ատյաններ տեղափոխելու ուղղությամբ: ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակը փոխելու և Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի համանախագահությունը խարխուլելու ջանքերը բացատրվում են ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում կիրառվող միջազգային իրավունքի նորմերը և սկզբունքները ձախողելու մտադրությամբ:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 52:

<sup>12</sup> Հ. Ալիևը ցանկանում էր ԼՂ հարցի շուտափույթ կարգավորման միջոցով ճանապարհ հարթել իր որդու համար Ադրբեջանի նախագահի պաշտոնում:

<sup>13</sup> Տե՛ս ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 5, գործ 22, էջ 55:

Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ Ֆրանսիան ներգրավված է ԼՂ-ում խաղաղության հաստատման գործընթացում և գործելով ի շահ խաղաղության հաստատման, իբրև միջնորդ ձգտում է անկողմնակալ լինել: Սակայն նույնը չի կարելի ասել ԱՄՆ-ի մասին, քանի որ վերջինս ըստ էության առաջնորդվում է նավթային շահերով:

2003-2006 թթ. ԼՂ հակամարտության կարգավորման հարցում բեկունային առաջընթաց չգրանցվեց, ուստի Ֆրանսիան ևս՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, առանձնապես աչքի չընկավ հատուկ նախաձեռնություններով: Բանն այն է, որ թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում այդ ընթացքում իշխանափոխություն տեղի չունեցավ, հետևաբար անփոփոխ մնացին նաև բանակցային գործընթացում կողմերի դիրքորոշումները:

ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը իր ելույթներից մեկում հայտնել է հետևյալ կարծիքը. «Երբեմն խոսվում է խաղաղության գործընթացում առաջընթացի դանդաղության մասին՝ առանց հաշվի առնելու լուծման ենթակա հարցերի բարդությունը, որոնց թվում է ԼՂ-ի՝ իր ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա հիմնված կարգավիճակի որոշումը»<sup>14</sup>:

Հայ-ֆրանսիական քաղաքական սերտ երկխոսության ամրապնդման և ԼՂ հակամարտության կարգավորման քննարկումների տեսակետից կարելի է առանձնացնել 2006 թ. ամռանը պետական այցով Հայաստան ժամանած Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի այցը, որի ընթացքում եղան նաև քաղաքական հայտարարություններ՝ ՀՀ արտաքին քաղաքական հիմնախնդիրների շուրջ: Նախ, Ֆրանսիայի նախագահն իր կարծիքն արտահայտեց Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Այնուհետև Ժ. Շիրակը ԼՂ հարցի առնչությամբ դեմ արտահայտվեց ԵԱՀԿ շրջանակներից հարցը ՄԱԿ տեղափոխելուն: Հաշվի առնելով ՄԱԿ-ի ԱԽ-ում Ֆրանսիայի վետոյի իրավունքը՝ դա կարելի էր համարել հայկական դիվանագիտության որոշակի ձեռքբերում, որը կջեղոքացներ Ադրբեջանի նախաձեռնությունները այդ ուղղությամբ: Այնպես որ ԵԱՀԿ Մինսկի խմբի հետագա ակտիվ գործունեությունը բխում է նաև Ֆրանսիայի շահերից:

2007 թ. ԼՂ հակամարտության կարգավորման ուղղությամբ համանախագահ երկրները (Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Ֆրանսիան) հանդես եկան մեկ այլ փաստաթղթով, որը ստորագրման վայրի անունով կոչեցին Մադրիդյան սկզբունքներ: Այն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցի վերաբերյալ նախատեսում էր հանրաքվեի անցկացում, ինչպես նաև զինուժի դուրսբերում Լեռնային Ղարաբաղին հարակից անվտանգության գոտուց:

2006-2008 թթ. ընկած ժամանակահատվածում բանակցային գործընթացում առաջխաղացումը գրեթե անշան էր, որի պատճառներից մեկն էլ 2008 թ. սպասվելիք խորհրդարանական և նախագահական ընտրություններն էին Հայաստանում և Ադրբեջանում:

Ֆրանսիան՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, հավասարակշռող դեր է ստանձնել այդ գործընթացում, քանի որ վճռորոշ ծայն ունի ԱՄՆ-ՌԴ աճող մրցակցության պայմաններում: Ֆրանսիան ԵԱՀԿ Մինսկի համանախագահության նախաձեռնողներից է և, օգտագործելով

<sup>14</sup> Վ. Օսկանյան, նշվ. աշխ., էջ 319:

եվրոպական քաղաքական ճարտարապետության հարուստ փորձը, կարող է գտնել ու առաջարկել կարգավորման ոչ ավանդական լուծումների բանաձևեր:

ԼՂ հակամարտության վերաբերյալ Ֆրանսիայի ներկայացուցիչները պարբերաբար նշում են, որ այստեղ, ինչպես նաև այլ հակամարտություններում, հնարավոր չէ խաղաղության հասնել առանց շահագրգիռ կողմերի միջև ուղղակի բանակցություններով ձեռք բերված փոխզիջումների: ԵԱՀԿ Մինսկի խմբի հիմնական նպատակը Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումն է, իսկ նրա դիտորդները հետևում են հակամարտող կողմերի միջև զինադադարի պահպանմանը:

2008 թ. մինչև 2012 թ. հիմնականում պահպանվեցին այն միտումները և ձեռքբերումները, որոնք արդեն արձանագրվել էին, և ԼՂ հարցի կարգավորման ուղղությամբ, ըստ էության, նոր առաջընթաց տեղի չունեցավ:

**АШОТ КАРАПЕТЯН – Политика Французской республики в вопросе урегулирования Нагорно-Карабахского конфликта.** – В силу давних исторических связей и наличия влиятельной армянской диаспоры Франция наиболее активно среди членов ЕС сотрудничает с Арменией.

Одна из важнейших внешнеполитических задач Армении – справедливое решение Нагорно-Карабахского конфликта в рамках Минской группы ОБСЕ. Будучи её сопредседателем и, по сути, представляя позицию Европы, Франция играет в ней важную роль. Она занимает объективную позицию и не поддаётся на провокации Азербайджана, стремящегося изменить формат переговорного процесса.

**ASHOT KARAPETYAN – The Policy of the French Republic in the Settlement of NK Antagonism.** – France is one of the EU countries that are actively engaged in cooperation with Armenia, having historical background and strong Armenian Diaspora which play a significant role in social-political life of France.

The peaceful solution of NK conflict is one of the priorities of Armenian foreign policy and France as one of co-chairmen's (others Russian and US) of OSEC Minsk group represents the united Europe position in this negotiation process as well.

In the frame of OSEC Minsk group the French policy does not accept any pressure on behalf of Azerbaijan, who wants to change the frame of OSEC Minsk group.